ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի հունիսի 10-ից 12-ը Շվեյցարիայի Համադաշնություն (Լոզան) գործուղման արդյունքների մասին

1. **ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ**

Կարեն Գիլոյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Շվեյցարիայի Համադաշնություն, քաղաք՝ Լոզան, հունիսի 10-12

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Համաշխարհային հակադոպինգային գործակալություն (WADA)

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

2022 թվականի հունիսի 11-12-ը կայանալիք ամենամյա Համաշխարհային հակադոպինգային սիմպոզիումին մասնակցելու նպատակով:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

WADA-ի ամենամյա սիմպոզիումի ժամանակ քննարկել ենք կարևորագույն հարցեր,մասնավորապես՝ սպորտում դոպինգի դեմ պայքարի հարցերը, համագործակցության հեռանկարները և համատեղ ծրագրեր իրականացնելու հնարավորությունները: Ծանոթացել եմ WADA-ի ղեկավար կազմի հետ և WADA-ի ծրագրերին: WADA-ն բարձր է գնահատում Հայաստանի Հանրապետության կառավարության վերաբերմունքը դոպինգի դեմ պայքարում:Սակայն մատնանշվել են խնդիրներ,որոնք լուծման կարիք ունեն:Մասնավորապես,անհրաժեշտ է ավելացնել դոպինգ-թեստերի քանակը:Հարկավոր է նաև ավելացնել

մարզաձևերը:Հատկապես կարևոր է թեստավորել խաղային մարզաձևերի ներկայացուցիչներին:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Հանդիպումներ եմ ունեցել WADA-ի նախագահ Վիթոլդ Բանկայի, տնօրեն Թոմ Մեյի, աշխատակազմի ղեկավար Ֆրեդերիկ Դոնզեի և պաշտոնատար այլ անձանց հետ: Իմ հրավերով աշնանը նախատեսվում է WADA-ի նախագահ Վիթոլդ Բանկայի այցը Հայաստան:Քննարկումների արդյունքում կարևորվել է հակադոպինգային պայքարի կանխարգելման փուլը:Մատնանշվել է ,որ անհրաժեշտ է ակտիվացնել նախազգուշական փուլը,անել հնարավորը,որպեսզի մարզիկներն ու մարզիչները գիտակցեն խթանիչների կործանարար ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա:Մեր կողմից առաջարկվել է Յունեսկոյի հովանու ներքո և WADA-ի սատարմամբ, 2024 թվականի գարնանը Երևանում անցկացնել միջազգային գիտաժողով:

8.ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

15.06.2022թ.